№ 102 Յունիսի 6 (18) 1881 Յունիսի 6 (18) № 102

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներսէս պատրիարք։— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայ հասարակութեան նուիրատուութիւնը։ Նամակ Նուխուց։ Նամակ Փոթիից։ Նամակ Բաքուից։ Նամակ Խմբագրին։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Բոլգարիա։ Սերբիա։ Անգլիա։ Թիւրքիա։ Նամակ Թիւրքիայից։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

## ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔ

Մեր Կ. Պոլսի Թղթակից Հայկակը գրում է մեզ, թէ Ներսէս պատրիարքը դարձեալ պէտք է հրաժարվի իր պաշտօնից եւ թէ նրա հրաժարականը պահանջում է Կ. Պոլսի ազգային գործողների մեծ մասը։

Ինչքան արաւ Ներսէսը իր ազգի համար, նրա ամենամեծ ճգնաժամի մէջ,— այդ կը գնահատի ապագան։ Միայն այժմ, հազիւ թէ կը գտնվի մի այլ մարդ սրբազանի տեղ, որ կարողանայ Ներսէսի պէս պաշտպանել հայոց դատը, եւրոպական պետութիւնների եւ Բ. Դռան առաջ։

Պահանջել որ Ներսէս պատրիարքը այժմ հրաժարվի, երբ հայոց խնդիրը նորից պիտի յուզվի,— ամենամեծ անտակտութիւն է Կ. Պոլսի գործողների կողմից եւ ապացոյց է թէ որքան նրանք քաղաքականապէս անզարգացած եւ անպատրաստ են։

Պատրիարքին հրաժարեցնելու պատճառը բերում են այն, որ նա իր պաշտօնը վարելու ժամանակ շատ չէ հոգացել հայոց ազգի ներքին հարցերի մասին։ Բայց ի՞նչ միջոց կար առանձին ուշադրութիւն դարձնել ներքին հարցերի վրա, երբ հայոց խնդիրը քաղաքականապէս յուզված էր եւ ազգի ամբողջ ուշադրութիւնը դարձրած էր այն վերանորոգութիւնները պահանջելու վրա, որ թիւրքաց հայերին պիտի տրվէին Սան-Ստեփանոսի եւ Բերլինի դաշնագիրների զօրութեամբ։

Մենք դարձեալ յոյս ունենք, որ Կ. Պոլսի հայոց ազգային ժողովի բարեմիտ մասը կաշխատի Ներսէսին թշնամի կուսակցութեան անբարեխիղճ ինտրիգաներին առաջ առնել եւ դարձեալ կաշխատի պահել պատրիարքին իր պաշտօնի մէջ, իսկ եթէ նա այնու ամենայնիւ կը հրաժարվի,— ազգը դարձեալ Նրան կընտրէ։

Անբարեխիղճ ենք ասում, որովհետեւ դա ամենամեծ ապերախտութիւն կը լինէր հայոց ազգի կողմից, կպչելով այն հանգամանքին, իբր թէ Ներսէսը անհոգ հանդիսացաւ թիւրքաց Հայաստանի ազգային գործերի ներքին կառավարութեան վերաբերութեամբ, մոռանալ այն ահագին եւ անգնահատելի ծառայութիւնները որ նոյն մարդը արաւ ազգի համար հայոց դատը պաշտպանելու գործում։

Ամո՛թ այն հայերին, որոնք մոռանալով իրանց գործողների արժանաւորութիւնները, ազգին նրանց ձեռքով մատուցած ծառայութիւնները, անձնական կրքից շարժված՝ մեծ բաւականութիւն են գտնում ինտրիգաներ անելու եւ օգտաւէտ գործողներին խայտառակելու մէջ։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ

Մեզանից շատերը գանգատվում են թէ, հայ հասարակութիւնը ժլատ է, անտարբեր է դէպի իր ազգային գործերը, բայց մենք հակառակը կասենք։

Մենք կասենք, որ հայ հասարակութիւնը ժլատ չէ, այլ առատաձեռն է դէպի իր ազգային գործերը, միայն անկանոն, անօգուտ ձեւով։ Հայ հասարակութիւնը մեծ յօժարութեամբ տալիս է իր նուէրները, բայց առանց ընտրութեան. նա չէ մտածում, չէ քննում թէ արդեօք տուած նուէրները ո՞ւմ ձեռքն է տալիս, ի՞նչ բանի համար է նուիրում, կամ տուած նուէրները իրանց նպատակին հասնում ե՞ն թէ ոչ։ Օրինակներ շատ կան։

Էջմիածնից դուրս կը գայ մի որ եւ է եպիսկոպոս կամ վարդապետ, որին Էջմիածինը խոստացել է արքութեան կամ ծայրագոյնութեան տիտղոս տալ, եթէ նուէրներ ժողովի, եւ ահա նրանք կը սկսեն թափառել զանազան հայաբնակ քաղաքներ եւ գիւղեր, ասելով, թէ Էջմիածնի այս ինչ շինութեանը վերանորոգութիւն է հարկաւոր, այն ինչ տեղը քանդվել է, տիրացուներին ժամաշապիկներ է հարկաւոր, եւ այլ այսպիսի շատ տեսակ երեւակայական բաներով կը սկսեն մոլորեցնել միամիտ հասարակութեանը,— յանուն ազգասիրութեան։ Եւ զարմանալին այն է, որ ո՛չ թէ միայն հասարակութիւնը առատութեամբ վարձատրում է այնպիսիներին, այլ եւ հասարակութեան մէջ կարծված ինտելիգենտները իրանցից ընտրում են մի քանի անձանց, կազմում են մանուածողով (ինչպէս անցեալ տարի պատահեցաւ Թիֆլիսում) եւ սկսում են գործակցել Էջմիածնի նուիրակների հետ, թէ կամայ և թէ ակամայ, ամաչեցնելով իրանց ծանօթներին, և առնելով նուէրներ, կարճ ժամանակամիջոցում խոշոր գումարներով բեռնաւորում են Էջմիածնի նուիրակներին և մեծ բաւականութեամբ ճանապարհ են ձգում։... Եւ ահա, տեսէք թէ Էջմիածնի օրգան «Արարատ» ամսագիրը որպիսի փառաւոր ածականներով կը վարձատրէ վերոյիշեալ ինտելիգենտներին.— Աստուածասէր, Քրիստոսասէր, Էջմիածնասէր, Աթոռասէր, Հայրապետասէր, Հայրենասէր, Ազգասէր, Աղօթասէր, Հոգեսէր և այլ շատ բաների „սէր“-ներով կը բարձրացնէ օդի մէջ։ Այսքանը բաւական չէ. ամեն մի ինտելիգենտը կը ստանայ Էջմիածնից օրհնութեան մի փառաւոր կոնդակ։

Իսկ սոցա հետ գոնէ հաւասարաչափ յիշվում ե՞ն արդեօք նոցա անունները, որոնք գրականական ասպարէզի մէջ մտած գիշեր և ցերեկ յօգուտ ազգի զոհում են իրանց բարոյական և մտաւորական և մինչև անգամ ֆիզիկական և նիւթական ոյժերը.— ճշմարտութիւնը պահանջում է խոստովանվել, որ այնպիսիները ոչ թէ միայն չեն վարձատրվում հասարակութիւնից գոնէ լոկ խրախուսանքներով, այլ որ զարմանալին է, այնպիսիները մի քանի մոլեռանդ և այսպէս ասած սուտ կոսմոպոլիտների շնորհիւ հասարակութեան տգէտ և մոլեռանդ մասից ճանաչվում են իբրև ազգի վնասակարներ։

Եւ ահա այս հասարակութեանը, որ այնքան առատ նուէրներով վարձատրեց Էջմիածնի նուիրակներին, առաջարկեցէք այժմ նուիրատուութիւն յօգուտ ազգային սուրբ նպատակների— և կը հանդիպէք սառնասրտութեան. „վահ, որ մէկիդ տանք, քանի ուզէք“, կը պատասխանեն։

Մինչդեռ Էջմիածնի մի որ և է կուսակրօն նուիրակ կամ մի օրհնութեան կոնդակ կարողանում է նոյն իսկ առաջին յայտնվելու ժամանակ գրգռել հասարակութեան բարեգործական եռանդը— դէպի ամեն մի անպատակ գործը, ռուսահայ մամուլը ամիսներով և գրեթէ տարիներով անդադար հրաւէրներ կարդալով հազիւ հազ կարողացաւ մի նշանաւոր գումար հաւաքել յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովատանջների, որը ազգային նպատակներից ամենագլխաւորն էր։ Եւ այն էլ եթէ չեմ սխալվում, հայ հասարակութիւնը նուիրում էր միայն նրա համար գլխաւորապէս, որ իր ազգանունը փառաւորապէս տպված տեսներ լրագրների էջերում (Բոլոր թերթերներ ամեն բաների մէջ կան)։

Զարթեցրէք մի որ և է ազգային, կարևոր խնդիր և հրաւիրեցէք հասարակութեանը օգնելու,— արհամարհանքի կը հանդիպէք։— Ո՞ր է „Մշակ“ լրագրի միջոցով առաջարկած եւրոպական և Հայաստանի մի քանի քաղաքներում թղթակիցներ պահելու խնդիրը, որոնք պէտք է թղթակցէին եւրոպական նշանաւոր լրագիրներին ազգային խնդիրների վերաբերութեամբ, և կամ մի և նոյն լրագրից առաջարկած եւրոպական մի որ և է լեզուով ազգային օրգան-լրագիր սնեցնելու խնդիրը....

Վերջապէս հայ հասարակութեան համար աւելի բարձր և յարգելի՞ է մի որ և է եպիսկոպոս կամ վարդապետ, քան թէ ազգային գրականական ասպարիզի մէջ գործող մի խմբագիր կամ հեղինակ։ Նրան աւելի յարգելի է Էջմիածնի անպատակ կոնդակը, քան թէ սուրբ նպատակների համար լրագրութեան քարոզած ճշմարտութիւնը։ Նրան աւելի յարգելի են Էջմիածնի կամ մի որ և է վանքի քանդված պատերը, քան թէ յօգուտ ազգի կրթութեան հիմնարկութիւնները։ Վերջապէս նրան աւելի յարգելի է տիրացուների ժամաշապիկները, քան թէ Հայաստանում սովից կոտորվող իր արիւնակից-ազգականները։

Հայ հասարակութիւնը մի որ և է բաղդադինդիր Մանկունուն տալիս է այնքան նիւթական ոյժ, որ նա, ինչպէս ինքը պարծենում է, կարող է նոյն իսկ ազգային միջոցներով ՀԱՍԵԼ նոյն ազգին, իսկ ազգային թէ քաղաքական և թէ կրօնական գլխաւոր ներկայացուցիչը եւրոպայի առաջ, Կ. Պոլսի հայոց Ներսէս պատրիարքը նիւթական կարօտութիւն է զգում, իր բարելից նպատակները առաջ տանելու.... Ահա հայ հասարակութեան գործունէութիւնը դէպի իր ազգային գործերը։ Եւ մենք իրաւամբ կրկնում ենք, որ հայ հասարակութիւնը ժլատ չէ, առատաձեռն է, բայց նուիրատուութեան տեղը ընտրել չը գիտէ,— աննպատակ է գործ ածում...

Կռունոս

## ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Մայիսի 19-ին

Նուխին իսկապէս վերցրած տեղովը մէկ նիւթ է և կարօտ մի սուր գրչի, որ մի առ մի լոյս աշխարհ հանի այն ամեն պակասութիւններն ու թերութիւնները, որ աչ ու ձախ աչքի են ընկնում ամեն մի քայլափոխում։

Բայց ինչու՞ մինչև այժմ այդ քաղաքից դուրս չեկաւ մի անձ, որ երբեմնապէս թղթակցէր մեր պարբերական լրագիրներից մէկին, միթէ գրող չը կայ. ոչ, գրող շատ կայ, բայց թէ ինչու համար չեն գրում, լռում են, իմ կարծիքով երկու գլխաւոր պատճառներով կարելի է լուծել այդ հարցը։ Այն է, որ դրանք կամ անտարբեր և միմիայն իր սեփական շահերի եռանից ընկնող հասարակութեան մէջ մնալով, ինքեանք ևս անտարբեր բնաւորութիւն են ստացել, կամ թէ չուզենալով, ինչպէս և ամեն գաւառացի թղթակից, իրանց թշնամիների թիւը աւելացնել, Գոռնեասոս աւօրն. ինչպէս իրանք են ասում, «փիս մարդի» դառնալ, «խաբարբղաս» (լրտես) անուն ժառանգել, ճարահատեալ լռել են։ Բայց ես չուզենալով ոչ առաջինների և ոչ էլ երկրորդների կարգին պատկանել և ակնյայտնի իմանալով, որ գրածներիցս ինձ ոչինչ շահ չը կայ, բացի դեռ սրանց վիրաւորելուց և «փիս մարդի» դառնալուց, բայց և այնպէս պէտք է գրեմ քանի որ սրանց ամեն մի անտարբերութիւնը, բառի բուն նշանակութեամբ, և կեանք պարսաւելի կողմերը տեսնելով, խիղճս պիտի տանջէ ինձ։

Վերը յիշեցի, որ նուխեցիք անտարբեր են, այո՛, խիստ անտարբեր են, նոյնը կրկնում եմ և այստեղ և որպէս զի ասածներս, առանց կենդանի փաստերի, չատերի կարծիքով, ոչ իրողութիւններ, այլ լոկ զրպարտութիւններ չը համարվեն, ահա և ձեզ կենդանի և ոչ թշնամաբար ստեղծված փաստեր։

Անտարբերութիւնից չէ՞ արդեօք, որ Նուխու պէս մի քաղաք մինչև այժմ չունի մի փոքր, ի չատէ բարեկարգված հայոց ուսումնարան։ Անտարբերութիւնը չէ՞ պատճառը, որ այսքան տարի է Նուխին չունի մի ընթերցարան, մի ժողովատեղի, մի բարեգործական նպատակով հաստատված ընկերութիւն։ Անտարբերութեանը չը պէտք է արդեօք վերաբերել, որ Նուխին, իր վրա քաղաք անունը կրելով, մինչև այժմ չունի մի համեստ բեմ, ուր երբեմնապէս ներկայացումներ տալով, թէ իրանք, եթէ ոչ բարոյական խրատներ առնէին, գոնէ կը զուարճանային և թէ եկամուտով իրանց ազքատիկ զբաղոցի վիճակը կը բարւոքէին, որը եթէ չասենք փակվելու, գոնէ իր օրհասական դրութեան մէջ է գտնվում այսօր։ Լսած կաք, ասենք ընթերցողներ, այդքան ընկերութիւններ հիմնվեցան Հայաստանում, որ մի Նուխեցի մի կոպէկ նուիրած լինի այս ինչ կամ այն ինչ ընկերութեանը *), այս կամ այն բարոյա-

*) 79—80 թուականների միջոցում միայն ուսուցիչ պ. Ցեր-Յակոբեանի ձեռքով աշակերտներից քանի մի ռուբլի ժողովվեցաւ «Արարատեան ընկերութեան» անունով, նրա ուր գործադրվելը ևս չիմացվեցաւ, չը նայելով պ. Զ-ի և նուիրատու 18 աշակերտաց ստորագրութեամբ այդ մասին գրած նամակների ձայներին, որոնց դեռ մինչև այժմ յիշեալ պարոնը իր հաշիւը պէտք է որ ներկայացնի։

կան հիմնարկութեանը։ Այն ինչ ամբողջ Կովկասում, եթէ չասենք քաղաք, գոնէ հարիւր տնից բաղկացած մի գիւղ կամ գպրոցի նստարանի վրա նստած աղքատ աշակերտն անգամ չը զլացաւ իր վերջին լումայն ձգել հասարակաց այդ գանձարանը։ Ցայտնի է դեռ, որ Նուխին 500-ից աւելի հայ բնակիչ ունի։ Կուզենայի հարցնել, յարգոյ խմբագիր, 5 բաժանորդ ունէք արդեօք Նուխում։ «Մեղուի» ու «Փորձի» մասին խօսել անգամ աւելորդ եմ համարում, որովհետև հաստատ կարելի է ասել, որ դրանցից և ոչ մի համարը դեղի համար չէք գտնի մեր Նուխում, բացի ի հարկէ «Արարատից», այն ևս, ինչպէս յայտնի է, ակամայ, որի թերթերը ամբողջ տարուայ ընթացքում առանց կտրատելու են մնում։ Կարճ, Նուխեցին չէ հետաքրքրվում ընդհանուր, ազգային հարցով։ Նա մօտ չի գնայ այն հիմնարկութեանը, այն գործին, որից առաջուց հաստատ չիմանայ թէ մի քանի կոպէկ շահ կայ իր ջեբին։

Սրանք զուրկ չեն նոյնպէս և անմիաբանութիւնից։ Մի քանի օրինակ էլ սրան հաստատութեան համար բերենք այստեղ։ Ընտրեցէք սրանցից հոգաբարձուք, (չեմ կարող ասել հասարակային որ և է գործի կամ որբերի խնամատար, և տեսուչ կամ ուսուցիչ, քանի որ սրանցից և ոչ մէկը գոյութիւն չունի Նուխում)։ չի քաշի մի քանի ամիս, մէկ էլ կը տեսնես ահա կռիւ ու անհամաձայնութիւն ծագեց միմեանց մէջ. մէկի բռնած ուղղութիւնը դուր չեկաւ միւսին, երկար իրար «եախաբողազ» լինելուց յետ, Աստուծու կամքին թողեցին իրանց ստանձնած պաշտօնը. մէկը աջ գնաց, միւսը ձախ, տակին մնացողն էլ տեսնելով իր վրա թողած լծի ծանրութիւնը, վհատվելով, ինքն էլ ակամայ «պահպանիչ» ասելուց յետ, ձեռքերը լուանում, գնում է։ Մի այսպիսի ընտրութեան բաղդն էլ Նուխին այս տարի ունեցաւ։ Հին, այն է 79—80 թուականներում ընտրված հոգաբարձուք աղայոց ուսումնարանին կից օրիորդաց ուսումնարանի չինութիւնն էլ աւելացնելով, ուսումնարանի վրա 500 բուբլի պարտք են թողնում։ Գալիս է նոր հոգաբարձուաց ընտրութեան ժամանակը։ Ընտրվում են չորս հոգաբարձուք՝ երկուսը ուսումնարանի, իսկ երկուսը տեսչական յարմնի վրա։

Աւելորդ չեմ համարում մի կարճառօտ հայեացք էլ սրանց գործունէութեան վրա ձգել։ Սրանց օրով հրաժարական է տալիս տեսչի օգնական և ուսուցիչ պ. Ցէր-Յակոբեանցը։ Քանի մի տարիներով չարչարված և հազիւ հաց գլուխ բերած օրիորդաց ուսումնարանը, մի քանի ամիս ռուս վարժուհու հսկողութեան տակ մնալուց յետոյ, փակվեց։ Եկաւ Շուշուց թեմական տեսուչ պ. Յ. Ցէր-Գրիգորեանցը, ուսումնարանի ել և մուտքը քննելուց և կարգի բերելուց յետ, 600 բուբլի ռոճիկով, երեք առարկայից, ուսուցիչ որոնեց, չը ճարեց։ Ինքը գնաց Շուշի, իսկ ուսումնարանը իր առաջուայ փոքր ի չատէ ունեցած փառքից էլ զրկվելով, երկու քահանաների և մի տիրացուի թոյլ հսկողութեանը յանձնվեց և այժմ դպրոցը օրհասականին է հասած։

Նոր-Բարեկամ

## ՆԱՄԱԿ ՓՕԹԻՑ

Մայիսի 21-ին

Փօթիի մէջ կան երկու եկեղեցիք, մին հայոց, միւս ռուսաց։ Բայց քրիստոնեայ զանազան եկեղեցեաց պատկանողներ շատ կան, և ամենքը յաճախում են հայ կամ ռուս (յոյն) եկեղեցիք, առանց խտրութեան։

Այստեղի գրիգորեան և կաթոլիկ հայերը գովելի են իրանց համերաշխութեամբ։ Գրիգորեան քահանան ստանում է հանգանակութեամբ ռոճիկ. այս ռոճիկի տալուն մասնակցում են և կաթոլիկ հայերը։ Այսպէս էլ կը լինէին ամենայն տեղերի գրիգորեան և կաթոլիկ հայերը միմեանց հետ, եթէ չը գտնվէին չարանախանձ կղերականներ։

Այս օրերս վախճանվեցաւ այստեղ մի հայ կաթոլիկ, որի թաղման համար եկաւ Քութայիսից դօն Իվանէ Անտոնեան, որի ազգականից երեւում է որ հայ է։ Հանգուցեալի տէրերն առաջարկեցին նրան, որ հանգուցեալին տանեն հայոց եկեղեցին. նա մերժեց։ Երևակայեցէք որ սա գիմնազիայի ուսումը վերջացնելով, գնացել է Իտալիա, այնտեղ ևս մնացել է բաւական ուսման մէջ։ Սորանից տասը օր առաջ վախճանվեցաւ Խեչինեանի երեխան. դարձեալ Քութայիսից եկաւ դօն-Վասիլի, որը հայաստանցի է՝ Խոտորջրից. Ախալցխայից նրան տեղափոխել են Քութայիս. սա ևս չը կամեցաւ տանել հայոց եկեղեցին հանգուցեալին և ոչ անգամ ընդունեց եկեղեցու պարագաներ, որոնք թաղման ժամանակ անշուշտ ինքն չունէր բերած. մի և նոյն ժամանակ թաղման կարգը կատարեց լատին լեզուով, որով ժողովուրդը մնաց զժգոհ։

Ահա այսպէս կաթոլիկ կղերականները, իրանց ֆանատիկոսութեամբ քանդում են հայ ազգի միութեան կապերը։ Գոնէ այս կողմից գրիգորեան կղերականները գովելի են, ինչպէս անցեալները պատահեց իմ ներկայութեամբ։ Զուգդիդում մի հայ կին վախճանվեցաւ, ինչտեղ միայն մի տուն հայ կար։ Այստեղի հայ քահանան այնտեղ էր, հրաւիրեց վրաց քահանաներին իրանց եկեղեցու զարդերով, տարաւ հանգուցեալին նրանց եկեղեցին և բոլոր կարգը կատարեց այնտեղ։

Յ. Ռաֆայէլեան

## ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Մայիսի 30-ին

Զատկի տօների Բագուի մէջ պատահած անկարգութիւնները, որոնց մասին ես իր ժամանակին արդէն հաղորդել եմ, առիթ եղան ոստիկանութեան ուշադրութիւնը հասարակութեան ապահովութեան վրա դարձնելուն։ Քաղաքային վարչութիւնը և ոստիկանութիւնը թուրք ստոր ոստիկաններին (эсаулы) հրաժարեցրել է, նրանց տեղ նշանակում է ռուսներին, որոնք թէպէտ քաղաքային մութ անկիւնների հետ այնքան ծանօթ չեն որքան թուրքերը, բայց ունեն մի առաւելութիւն վերջիններից, այն է որ նրանք արդարութիւնը երբէք չեն ծախի մի քանի կոպէկի համար։ Այդ առաւելութիւնը մեծ նշանակութիւն ունի ժողովրդի ստոր դասակարգի համար, որը մինչև այժմ հարկաւոր եղած դէպքերում թուրք ոստիկանների կողմից փոխանակ օգնութեան՝ դժուարութիւնների էր պատահում։ Թուրք ստոր ոստիկանի համար սովորութիւն էր դառել ամեսայս որ դէպքում մը որ և իցէ խեղճի տգիտութիւնից օգուտ քաղել, երբ որ վերջինին պատահում էր գործ ունենալ նրա հետ։ Այդ բանը հաստատելու համար փաստեր շատ կարելի է բերել, փաստեր, որոնք ոչ միայն հասարակ եսավուլների նեղ շահախնդրութիւնը կարող էին հաստատել։ Սակայն կան այնպիսի հանգամանքներ, որոնք կամայ ակամայ ստիպում են մարդուն լռել այդ փաստերի մասին, մինչև այն ժամանակ, երբ որ գաւառական մամուլը մի որոշ ատիճանի ազատ կը լինի։

Այստեղի հրէաները Ռուսաստանում պատահող անկարգութիւնների պատճառով մեծ երկիւղի մէջ են։ Լուր է տարածվել, թէ վաղը Բագուի ռուս առհեստաւորները մտադիր են անպատճառ յարձակվել այստեղի փոքրաթիւ հրէայ վաճառականների վրա։ Թէ որքան ճշմարիտ կը լինի այդ լուրը, դժուար է նախադուշակել, միայն ես երէկ և այսօր անձամբ տեսակցութիւն ունեցայ մի քանի հրէայ վաճառականների հետ. նոքա այդ լուրը հաստատում են նրանով, թէ ամենայն օր իրանց մօտ գալիս են ծանօթ և անծանօթներ նրանց նախազգուշացնելու համար։ Վաղվանից որ ռուսաց տօն է չարունակ երեք օր, հրէաները մտադիր են կողպած պահել իրանց խանութները։ Ասում են թէ կառավարչութիւնը հարկաւոր կարգադրութիւններ է անում կարգը պահպանելու համար։ Ի՞նչ և իցէ կը սպասենք մինչև վաղը և տեսնենք ինչ կը պատահի. երանի թէ այդ տօն օրերը առանց խառնակութիւնների անցնեն։ Բայց հազիւ թէ այդ լուրը հաստատվի, որովհետև այստեղ ռուսները առիթ չունեն զբաղվելու Բագուի հրէայ վաճառականների դէմ. սրանց երբէք չէ կարելի հաւասարացնել Ռուսաստանի հրէաների հետ հարստահարութեան կողմից։ Բագուի հրէաները մի և նոյն տեսակ համեստ վաճառականներ են, ինչպէս հայ և ռուս վաճառականները։

Նամակս վերջացնում եմ մի օրերս լուրով։ «Русскій Курьеръ» լրագրի № 119-ին մէջ տպված Բագուից գրված թղթակցութեան համար, ասում են մի քանի անձինք կամենում են դատ բանալ թղթակցի դէմ, որովհետև այդ թղթակցութիւնը վիրաւորել է նրանց։ Դատ բացողներից գլխաւորը տեղւոյս գաւառապետն է, որի մասին յիշեալ թղթակցութեան մէջ ասված էր, թէ նա փոխանակ իր պաշտօնը կատարելու, պարապում է մլջնորդութեամբ, օրինակ իբր թէ մի օրվայ մէջ նա գիւղականներից գնել է 1000 բուբլով մի գետին և ծախել է ուրիշին 7000 բուբլով։ Ասում են թէ գաւառապետը հեռագրել է «Рус. Курьеръ» լրագրի խմբագրին, որ սա յայտնէ թղթակցի անունը։ Բայց խմբագիրը պատասխանել է թէ ինքն է պատասխանատու թղթակցութեան համար։

Նամակս վերջացրած էր, երբ լսեցի թէ քաղաքագլուխը հրաւիրել է բոլոր տեղային գործարանատէրերին և խնդրել, որ սոքա համոզեն իրանց գործաւորներին անկարգութիւններ չանել։ Վաղը փողոցներում կարգապահ զինուորներ կը լինեն։ Սպասում են նահանգապետին Թիֆլիսից։

Շիրվանզադէ

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 3-ին յունիսի

«Մշակի» 95-դ համարում Ֆրանսիայից գրված պ. Լանդիշի նամակը, ուր յիշում էր պ. Դիւլօրիէի առաջարկութիւնը, Փարիզում ֆրանսերէն լեզուով հայոց օրգան հիմնելու, մեծ համակրութեամբ ընդունվեցաւ մեր և մեր ծանօթ մի քանի երիտասարդներից, և խնդրեցին ինձ, որ այս փոքրիկ նամակով դիմեմ ձեզ, խնդրելով չապել «Մշակի» 96-դ համարում «Ինչ է յայտնվում» վերնագրով առաջնորդող յօդուածում յայտնած ձեր միտքը իրագործելու,—այն է դիմել ուղղակի պ. Դիւլօրիէին և խնդրել ստորագրութեան թերթը։

Մենք մեր ծանօթ երիտասարդների հետ միասին, որ թուով դեռ 5—6 հոգի ենք, խոստանում ենք այն օրգանի հիմնելու օրից, մի մի օրինակ բաժանորդ գրվել։ Թէ որքան անհրաժեշտ և օգտաւէտ է եւրոպական մի լեզուով հայոց օրգան ունենալը, մանաւանդ մեր ազգի այսպիսի ժամանակ, այդ յայտնի է ամեն մի բանիմաց անձին, միայն մենք մեր կողմից կը ցանկանք և կը հրաւիրենք մեր ազգայնոց ուշադրութիւնը այս հարցի վերաբերութեամբ։

Եթէ Կ. Պոլսի հայ հասարակութիւնը, մանաւանդ ազգային ժողովը, անուշադիր մնաց այս հարցին, մենք յուսով ենք, որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը սիրով կընդունի այդ առաջարկութիւնը, մանաւանդ որ, ընդամենը միայն 200 բաժանորդ է հարկաւոր։ Ոչ թէ Թիֆլիսի հասարակութիւնը, այլ միայն ուսանողները կարող են լրացնել այս թեթև պահանջը, մինչդեռ զանազան Բալօ-Մինար անբարոյականացնող թատրոնական ներկայացումների վրա հարիւրներով են վատնում։ Եթէ Բալօ-Մինար պիէսան, որ ներկայացնում է հանդիսականներին ժողովրդեան անբարոյականութեան պատկերը, այնպէս համակրութեամբ է ընդունվում, ինչու չը համակրել պ. Դիւլօրիէի ձեռքով հիմնվող այն օրգանին, որի միջոցով լուսաւորվեալ աշխարհին, եւրոպային պէտք է ներկայացնվեն հայութեան հանճարի ազնիւ նկարագիրը, և Թիւրքիայի հայ ժողովրդի թշուառութիւնները....

Ա. Ս.

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԲՕԼԳԱՐԻԱ

Բօլգարական իշխան Ալէքսանդր յոյս ունի, որ իր արած քայլը կաջողվի, որովհետև նրա առաջարկութիւնը ընդունվել է եւրոպական երեք պետութիւններից, որոնք ցանկանում են, որ իշխանը չը հրաժարվի բօլգարական գահից։ Բ. Դուռն էլ իր կողմից կը պաշտպանի իշխանին, որովհետև նա ևս ոչինչ օգուտ չունի Բօլգարիայի կառավարութեան փոխվելուց։ Մինչև ընտրութիւնների կատարվելը իշխանը հինգ զինուորական նահանգապետներ է նշանակել, որոնք անսահման իշխանութիւն կունենան նահանգական վարչութիւնների վրա։ Նահանգապետները հրահանգներ կը ստանան անմիջապէս մինիստրութեան նախագահից։

Իշխանին ընդդիմադրող կուսակցութիւնը կարավելովի առաջնորդութեամբ մտադիր է պատասխանել իշխան Ալէքսանդրի ազդարարութեանը մի ազդարարութեամբ, որով պէտք է հերքվի այդ կուսակցութեան վրա դրած մեղադրանքները և յայտնվի, թէ ընդդիմադրականները փորձի համար կընդունեն իշխանի առաջարկութիւնը միայն երեք տարի ժամանակով։ Այդ ժամանակը բաւական է փորձելու համար, եթէ իշխանի առաջարկութիւնը կարող է լաւացնել բօլգարական գործերի դրութիւնը։ Ամենքը հաւատացած են, որ բօլգարական իշխանը չի ընդունի այդ առաջարկութիւնը։

## ՍԵՐԲԻԱ

Մի քանի լրագիրներ հաղորդում են, որ օգոստոսի 22-ին իշխան Միլան Սերբիայի թագաւոր կը յայտնվի և որ այդ գործի համար արդէն ստացված է աւստրօ-ունգարական կառավարութեան համաձայնութիւնը։ Բէլգրադի մէջ լուր է տարածված, որ այդ գործին ոչ մի պետութիւն չի ընդդիմանայ, որովհետև Եւրոպայի համար մի և նոյն է Սերբիան իշխանութիւն կը լինի, թէ թագաւորութիւն։

Սերբիական երկաթուղիները կը միանան Թիւրքաց երկաթուղիների հետ Վրանիայի մէջ, որովհետև առաջվայ նշանակված տեղը անյարմար է յայտնվել։ Որոշված գծի վրա աշխատանքները արդէն սկսված են։ Վրանիայի և Նիշի մէջ կառուցվող երկաթուղին անցնում է Սերբիային զիջած ամենապտղատու դաշտի մէջ։ Իշխան Միլան պատրաստվում է յունիս ամսին Բերլին ուղևորվել և մնալ այնտեղ մինչև կը վերջանայ իր պալատի շինութիւնը։ Պատմում են, որ իշխան Միլանի ճանապարհորդութեան նպատակն է գերմանական կառավարութեան համաձայնութիւնը ստանալ Սերբիան թագաւորութիւն յայտնելու համար։

## ԱՆԳԼԻԱ

Անգլիական կառավարութիւնը չափազանց զգուշութեամբ է վարվում իրլանդական շփոթված ազգաբնակութեան հետ։ Անգլիական բազմաթիւ ազատամիտ լրագիրները այն կարծիքի էին, որ կառավարութիւնը վերջապէս կը ոչնչացնէ իրլանդական կալուածական միութիւնը, և այդպիսով վերջ կը դնի այն բացարձակ ցոյցերին, որ կատարել են տալիս անբաւական իրլանդացիներին միութեան եռանդոտ անդամները։ Բայց Գլադստոն յայտնեց համայնքների ժողովի մէջ, որ կառավարութիւնը չէ էլ մտածել կալուածական միութեան ոչնչացնելու մասին, որովհետև այդպիսի կարգադրութիւնը ընդդէմ կը լինէր օրէնքներին, որոնք թոյլ են տալիս ժողովների և ընկերութիւնների ազատութիւնը։ Իսկ պարլամենտից նոր բացառական օրէնքի խնդրելը կառավարութիւնը ՀԱՍԱԿԱՐ է համարում։ „Times“ լրագրի կարծիքով Գլադստոնի այդպիսի վարմունքը վտանգաւոր է և այսուհետև Իրլանդիայի մէջ պատահած անցքերի համար կառավարութիւնը պատասխանատու կը լինի։ Լրագիրների մեծամասնութիւնը նոյնպէս այդ կարծիքի է, թէպէտ ամենքը գնահատում են այն զգուշութիւնը, որ առիթ է տալիս Գլադստոնին չը դիմել վարչական խիստ միջոցների իրլանդական շարժումը զսպելու։ „Daily News“ ազատամիտ լրագրի կարծիքով, անհարելի է փակել իրլանդական կալուածական միութիւնը առանց մի նոր օրէնքի և որ աւելի լաւ է գործել խիստ միջոցներով, օրէնքի հիման վրա յանցաւոր գործողութիւնների դէմ, քան թէ միջոց չը տալ իրլանդացիներին հաւաքվել և քննել իրանց օրինաւոր շահերը կալուածական միութեան առաջնորդութեամբ, որի գոյութիւնը ապօրինի չէ։ Բազմաթիւ իրլանդական և արմատական լրագիրները մատնացոյց են լինում այն իրողութեան վրա, որ Անգլիան ունի նոյնպէս լօրդերի ժողով, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ արտօնութիւն ունեցող կալուածատէրերի միութիւն։ Եթէ լօրդերը այդպիսի մի զօրաւոր միութիւն ունեն, ուրեմն անիրաւացի կը լինի արգելել տարաբաղդ գիւղացիներին իրանց ժողովը ունենալ։

Կալուածական օրինագծի քննութիւնը շարունակվում է պարլամենտի մէջ և անդադար յարձակումները Գլադստոնի վրա

վեսում են առաջին մինիստրի առողջութեանը։ Գլադստոնի բարեկամները խորհուրդ են տալիս նրան թողնել պարլամենտական կռիւները և լօրդ Բիկոնսֆիլդի նման անցնել լօրդերի ժողովը և այնտեղ հանգստանալ։ Բայց Գլադստոն վճռել է անձամբ անցկացնել համայնքների ժողովի մէջ կայուածական օրինագիծը և, երբ նա կընդունի, առաջին մինիստրը կընդունի լօրդի կոչումը և կը հանգստանայ լօրդերի ժողովի մէջ։

## ԹԻՒՐՔԻԱ

Երէկ Ազգային Սահմանադրութեան 21-րդ տարեդարձի հանդէսը տեղի ունեցաւ Եէնի-գուլէ Ազգային Հիւանդանոցի մէջ, մեծ շքով և կանոնաւորութեամբ։ Հիւանդանոցի մուտքը զարդարուած էր Օգոստափառ Սուլթան Համիտ Բ.-ի պատկերովն, որ շրջապատուած էր դափնիներէ և երփներանգ դրօշակներէ։ Ներքնահողմը զետեղուած էր բարեյիշատակ Պէզճեան Յարութիւն Ամիրայի մարմարիոնէ կիսարձանը։ Նոյն շքեղութեամբ պճնուած էր նաև Հիւանդանոցի պարտէզն, որոյ մուտքը գրաւած էին ճերմակ շրջազգեստով զեռահաս օրիորդներ, բարի գալուստ մաղթելու համար հանդիսականաց։ Նուագարանի և պարի համար յատուկ տեղեր պատրաստուած էին, վրանակներով հովանաւորեալ։ Հանդիսականք, որք շոգեկառքով, նաւակներով կամ հետիոտս եկած էին, 10,000-էն աւելի կը հաշուէին։ Գեր. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, որ Ս. Պատրիարքի կողմէն փոխանորդաբար կը նախագահէր հանդիսին, հանդիսաւոր պատարագ մատոյց։ Ժամ 4-ին, հարիւրաւոր կոչնականք բազմեցան առաջին սեղանին շուրջը, և ճաշի ատեն, Իզմիրլեան Սրբազանն առաջին բաժակն առաջարկեց Սուլթան Համիտ Բ.-ի կենացը համար, որ ջերմ ծափահարութեամբը ընդունուեցաւ, Զանազան անձինք յաջորդաբար բաժակներ առաջարկեցին Հայոց ազգի, Ս. Պատրիարքի, Սահմանադրութեան, Պէզճեանի, Հոգաբարձութեան, Ազգային երախտաւորաց և Միացեալ Ընկերութեանց կենացը։ Այս վերջին բաժակին ի պատասխան, Միացեալ Ընկերութեանց Նորընտիր Ատենապետ Տ. Մինաս Չերազ հետևեալ ճառն արտասանեց ի դիմաց Տնօրէն Ժողովոյ, որ ներկայ էր իւր ամբողջութեամբ։

„Պարոններ, կը ներէ՞ք ինձ շնորհակալ լինիլ ձեզ, իբր ներկայացուցիչ Միացեալ Ընկերութեանց, այն բաժակի համար որով կը պատուէք մեր կրթական ակումբ։ Դուք կը պատանիք այն փառաւոր սերունդի որ հիմնեց սահմանադրութիւնն իւր սխրալի ճիգերով, և ջանաց ձուլել նոր սերունդն նոր գաղափարներով։ Ձեր անձնուիրութեան պտուղն է ուրեմն արդի երիտասարդութիւնն, որ ձեռնարկած է պատրաստել լաւ յաջորդներ թէ՛ ասա և թէ մանաւանդ մեր բնագաւառի մէջ։ Մեր հայրենիք մի բարոյական հիւանդանոց է, ում խնամ կը տանին Միացեալ Ընկերութիւնք, որպէս մի աննման հոգաբարձութիւն խնամ կը տանի այս հիւանդանոցի։ Մեր ազգապանծ Պատրիարքի պաշտպանութեան տակ երիտասարդութիւնն ձեռնարկած է լոյս ծաւալել յետին թաղին և յետին գիւղին մէջ, այլ պէտք ունի ձեր աջակցութեան։ Դուք, որ փշրեցիք ազնուապետութիւնն, պարտաւոր էք դերազանցել զայն ամէն տեսակէտով։ Ազնուապետն կը շռայլէր իւր ոսկի կրօնական, բարեգործական և կրթական հաստատութեանց համար։ Դուք ունիք և պիտի ունենաք նոյն առատասրտութիւնն։ Ժողովուրդն է անհուն իւր ծով, և որպէս ծովն ձեւացած է կաթիլներէ, ձեր լումայ կը կազմէ ճոխութիւն։ Հեղէք զայն Միացեալ Ընկերութեանց դանձանակին մէջ, և դանձանակն պիտի լինի դանձարան։ Այս հացաշատ սեղանի վրայ, յիշեցէք ձեր հեռաւոր եղբայրներ զորս բարոյական սովն կը հիւծեցուցէ Նիւթականին պէս։ Որպէս Աստուած է սկիզբն ամէն արարչութեան, դաստիարակութիւն է սկիզբն ամէն երանութեան։ Զը գլանամք զայն հայ ժողովուրդին, Հայաստանէ մինչև Կիլիկիա։“

Տնօրէն Ժողոյ ատենադպիր Տ. Յովհաննէս Արշակունի առաջարկեց վերջին բաժակն ի պատիւ Կարգադիր Յանձնախմբին։

Երկրորդ սեղանէն յետոյ, հանդիսականք այց տուին Հիւանդանոցի պատսպարելոց, ուրոց վրա յայտնի կը նշմարուէին ժրաջան հոգաբարձութեան մը խնամն և հոգատարութիւնն։ Ապա դիմեցին պարտէզն, ուր գրաւիչ երաժշտութիւն մ՚ազգային երաժշտատպետ Նիկողոս Էֆէնտի Թաշճեանի ուսաջնորդութեամբ նուագեց Թուրքերէն և Հայերէն ընտիր երգեր ի պատիւ պետութեան և ազգին։ Պարը կատարեցաւ մեծ եռանդով։ Հանդիսականաց մէջ էին մի քանի Զմիւռնացի պատուաւոր ազգայինք, ուրոց մէջ էր նաև Տ. Գրիգոր Զիլինկիրեան։ Այս հանրածանօթ գրագէտին համար պատրաստուած էր յատուկ սեղան մը, ուր Պոլսեցի երիտասարդ գրագէտք բաժակ առաջարկեցին ի պատիւ Զիլինկիրեանի, և Զմիւռնացի և օտարաքաղաքացի գրագիտաց։ Հանդէսը տեւեց մինչև երեկոյ, քաղցը տպաւորութիւններ թողլով ամէն Հայու սրտին մէջ։

Այս առթիւ Հիւանդանոցի հասոյթը 20,000 ղրուշի մօտ կը հաշուի։ Կը լսեմք թէ Միացեալ Ընկերութեանց „անգլիական“ դանձանակին հասոյթն ալ 2,000 ղրուշի մօտ գումար մ՚արտադրած է։

(Մասիս)

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 26 մայիս 81

Երբ որ «Մշակը» անդադար կրկնում էր թէ փոխանակ Կ. Պոլսի մէջ կոյրկուրայն գործելու, հարկաւոր է որ գործող անձինք վեր կենան գնան Հայաստան նորան ճանաչելու, ուսումնասիրելու, նորա պէտքերը իմանալու համար, շատերը մեղադրում էին և դեռ ևս շարունակում են մեղադրել նորան «անփորձութեան, անքաղաքագիտութեան և անտակտութեան» մէջ։ Մինչև այսօր դեռ շատերից եմ լսում հեղնական խօսքեր. «չիտակ է, որ ձեր Մշակը կը պահանջէ Կ. Պոլսի գործող մարմիններուն Հայաստան տեղափոխիլը»։—Այո, չիտակ է, ինչ կը հրամայէք, հարցնում ես նոցա։—Ըշէ ըլլալու փան մ՚է այդ, զոր կը պահանջէք և այլն։—Ի՞նչու «ըլլալու» բան չէ, հարցնում ես նոցա։—Ըշէ.. ըշէ.. ըշէ.. ըշէ և մի քանի էլ «ըշտեներ», իսկ յետոյ մի քանի չնչին «քաղաքական» արգելք, որի ինչ լինելը իւրաքանչիւր երեխան էլ կարող է գուշակել, առանց սակայն մի կօպէկի նշանակութիւն տալու նորան։ Լաւ, ամենքս էլ հարիւր անգամ, քսան տարի առաջ գիտենք թէ կան յիրաւի մի քանի «արգելառիթ» կոչված պատճառներ թիւրքիայի կողմից, բայց էլ ինչ ուրիշ պատճառներ կան, որոնց վրա այսչափ խորհրդաւոր կերպով ակնարկում են զանազան խենթ մարգարէներ և իմաստակ փիլիսոփաներ։ Պարտաւորութիւն եմ համարում անկեղծօրէն խոստովանվիլ, որ մինչև Կ. Պոլիս գալս ես ինքս քիչ էի հակամիտ համաձայնվելու ձեզ հետ կարծելով թէ ձեր պահանջները գուցէ տարաժամ, անտակտ և անփորձ էին, բայց այսչափ ժամանակ այստեղ ապրելուց յետոյ, ես բոլորովին համոզվեցի, որ Կ. Պոլսի ինտելիգենցիան այլապէս չէ կարող լինել Հայաստանի չահերի և բաղդի զեկավարողը, եթէ ոչ Հայաստան տեղափոխվելով. և իսկապէս, ինչ ուրիշ միջոց կայ բացի այդ տեղափոխութիւնից Հայաստանը ճանաչելու, նորա կարիքները հասկանալու համար։ Այո, գուցէ ուրիշ բան լինէր եթէ Կ. Պոլսեցի մարդկանց ուղեղը և դաստիարակութիւնը քիչ նորմալ և բնական զարգացման մէջ լինէր, մինչդեռ առողջամտութեան և դրականութեան կողմից Աստուած մի այնպիսի անբաղդութիւն է տուել սոցա ուղեղին, որ երբէք կարելի բան չէ ընդունել թէ Կ. Պոլսեցին առանց մի տարի գոնէ Հայաստանի մէջ ապրելու կարողանայ որ և է գաղափար կազմել այդ լեգենդական և հրէշանման երկրի վրա... Ահա այդ է պատճառը, որ դիտելով այսչափ ժամանակ սոցա բոլոր գործունէութիւնը, եկայ վերջնականապէս այն եզրակացութեան, որի մէջ համաձայն են (Մշակի հետ միասին) և այնպիսի մարդիկ, որոնց անունները շատ համոզիչ հեղինակութիւն կը լինէին, եթէ յարմար լինէր, մէջ բերել նոցա յականէ անուանէ....

Ուրեմն այն, ինչ կրկնում էր Մշակը այսչափ տարի իր խմբագրի բերանով, նոյնը պընդում է և վաւերացնում է նա, որը մի քանի ամիս շարունակ սոցա մէջ է գտնվում և սոցա գործերը դիտում։ Այս բոլոր դիտողութիւններից յետ պիտի ասենք նախ՝ որ երբէք ազգաշնաս մի բան չէ (ինչպէս այդ կարծում են բթամիտները), բաց անել մեր վէրքերը մի օր յառաջ, ցոյց տալ մեր յոյսերի սնոտիութիւնը Կ. Պոլսի գործիչների վերաբերմամբ, իսկ յետոյ մտածել նորա վրա թէ ինչ միջոցներով անմիջական օգնութիւն հասցնենք, ձեռք կարկառենք, էլ առանց սոցա հետ յարաբերութեան մտնելու, այն երկրի ցաւերին, որոնք հաւասարապէս մոտիկ են և ռուսահայերի սրտին։ Ազգային ժողով, կանանց ընկերութիւններ, Արուեստասիրաց ընկերութիւն, Միացեալ ընկերութիւն — սոքա ամենքն էլ միայն անուանով են մեծ, մինչդեռ մտէք նոցա մէջ, խօսեցէք «գործիչ» ասվողների հետ և տեսէք թէ ինչ անհիմն և անհաստատ մտաւոր զարգացման մարդկանց ժողովարան են սրանք։ Հեռու չը գնանք ու լոկ բառերով չը շատախօսենք. հարիւր ղրղոցներից ու սկանդալներից յետ փոխվեց վերջապէս Միացեալ ընկերութեան գործադիր ժողովը, կազմվելով այնպիսի մարդիկներից, որոնց զեկավարողը պիտի լինէր երկու ամենագործնական և բարեմիտ անձինքներից մինը՝ կամ դոկ. Փէչթիմալչեան կամ Մինաս Չերազ։ Որովհետև դոկ. Փէչթիմալչեանի պրոգրամը շատ էր որոշ և պարզ, վանորայ Միացեալ ընկ. ընդհանուր ժողովը չխորժեց այսպիսի պարզ բաներից։ Կարծիք չը կայ, որ եթէ վերոյիշեալ երկու մարդկանց առաջնորդութեամբ էլ մի իրական բան չերևար, էլ ինչ յոյս կարելի էր դնել զանազան քեթիպատների (տերութեան գրագրիչներ) և էֆէնդիների վրա, որոնք ամբողջ երկու տարի ոչինչից ոչինչ չը յառաջացրեցին գործադիր ժողովի մէջ։ Օրինակ ինչ օգուտ կարող են այսպիսի մի փոփոխութիւնից յետ ևս տալ այդ տեսակ չբրջաբերական «Միացեալ ընկերութեանց հայոց առ գաւառական տեսուչս։ «Գրեցէք մեզ մանրամասն ձեր տեսչութեան ենթարկուած ամեն գպրոցի բարոյական (?) վիճակագիրն։ Կը խնդրեմք որ նշանակէք թէ անձնիւր վարժարան ինչ միջոցներ կը գործածէ որպէս զի զարգանան ուսանողի մարմինն, սիրան և միտն։ Քանի՞ են զբօսանքի ժամերն, ուր և որպէս կը լինի ըզբօսանքն (?!) և ինչ եղանակաւ (!!!) Որպէս կը մշակեն ընկերութեան պաշտօնեայներն ուսանողի սիրան (!) և ինչ դրութեամբ կը ներշնչեն նմա բարոյական զգացում և ինքնաճանաչողութիւն և այլն և այլն։» Ահա ձեզ այն նոր և գործնական միջոցները և հրահանգը, որոնցով պիտի ճանաչվի Հայաստանը։ Ասեցէք խնդրեմ, ինչ պիտի հասկանայ ու պատասխանէ խեղճ տեսուչը «բարոյական վիճակագիր», «սրտի և հոգու զարգացում», «զբօսանքի եղանակ» և այլն այսպիսի խօսքերից։ Ի՞նչ նշանակութիւն և իմաստ ունեն, ինչ վերաբերութիւն իրական գործին այսպիսի անբովանդակ բառեր, որոնք նաև տպագրվում են լրագրի մէջ... բայց մթթէ կարելի է մի բանով մեղադրել հրահանգ ապողներին, որ նրանք անհասատ հարցեր են առաջարկում տեսուչներին. ինչ հարց նրանք կարող են առաջարկել այն առարկայի, այն «Հայաստան» ասված հրէշի վերաբերմամբ, որին ոչ ոք չէ տեսել և ոչ ոք չը գիտէ թէ՝ ինչ նշաններ ունէ այդ հրէշը. պղաւոր է նա թէ անպող. երկու ոտերի վրա է ման գալիս թէ չորս, մարդո՞ւ պատկեր ունէ թէ կապիկի... Ինչպէս կարելի է յիրաւի մի էակ չը տեսած, նորա նկարագիրը անել և նորա վրա իմաստաւոր հարցեր առաջարկել։ Այս է պատճառը, որ «Մշակի» պահանջը այն բնական և լոգիքական պահանջն է, որով միայն կարելի է Կ. Պոլսի մէջ հրահանգներ գրողներին Հայաստանի «յառաջադիմութեան» զեկավարող լինել։

Բայց դիցուք հէնց թէ յիրաւի Կ. Պոլսի պէս մի գեղեցիկ և բանաստեղծական անկիւն չէ կարելի փոխել Հայաստանի պէս անզարդ և անպաճոյճ երկրի հետ, որ հնարին լինէր տեղափոխվել այնտեղ, բայց մթթէ անհնարին է ևս այն, որ Կ. Պոլսի մէջ «գործող» անթիւ և անհամար անձինքներից գոնէ հարիւրից տասն գնար Հայաստան, մի տարի գոնէ մնար այնտեղ նորան աչքով տեսնելու ու իր տեղը ուսումնասիրելու համար։ Մինչդեռ այսպիսիները դուք լապտերով չէք գտնի այստեղ և եթէ մէկին առաջարկում ես այդպիսի բան, նա պատասխանում է. «ախպար, չատ կը փափագիմ տեսնել Հայաստան, բայց ինչ անեմ, որ ձիուց վախենում եմ և եթէ նստեմ նորա վրա, խսկայն վայր կընկնեմ ու գլուխս կը փշրեմ։» Էլ ինչ էք պահանջում դուք այսպիսիներից և ինչ յոյս դնենք սոցա վրա. սոքա միայն կարող են լաւ հռետորական ճառեր կարդալ իրանց ընկերութիւնների և ազգային ժողովի տարեդարձի օրը, ինչպէս այդ կանեն այսօր, հաւաքվելով քաղաքից դուրս մօտ քսան հազար հոգի. կարելի է երևակայել թէ քանի հազար «կեցցէ» և «մեծ ապագայ» պիտի տրաքի այսօր ազգային ժողովի տարեդարձի օրը և քանի օր լրագիրները պիտի լցվեն կարդացած ճառերի տպագրութեամբ...

Միակ մխիթարական բան այն է, որ Գիւքերինի գլուխսը օրից օր սպասվում է, հայկական խնդրի համար նախապատրաստական խորհուրդ են անվում ռուսաց և գերմանական դեսպանների ամարանոցներում, միւս կողմից Թիւրքիան սկսել է գլուխը կորցնել, Հայաստանի բարենորոգումների նոր պրօեկտնէր հրատարակել տալ ամեն օր լրագիրների մէջ, զգալով որ այժմ էլ չը կայ ոչ փախուստի և ոչ պրծնելու ճանապարհ այդ անպիտան ցաւից։ Շատ վստահելի աղբիւրներից լսեցի, որ Գլադստոնը հայոց հարցի մէջ պիտի լինի աւելի խիստ և աւելի անդրդուելի քան թէ երկու նախընթացի մէջ։ Տար Աստուած, որ չուտով պրծնէինք Կ. Պոլսի գործիչների վրա դրած յոյսից և մէն ու միայնակ մնացած Ներսէս պատրիարքի ջանքերով ստացվէր Հայաստանի համար այն, որի վրա ուղղած են չորս միլիօն ազգի աչքերը. բայց այն ժամանակ հարկաւոր է վեր առնել փայտը ու կանգնել Տրապիզոնի ճանապարհի վրա, «մինիստրութեան» համար Հայաստան անցնող հազարաւոր բախտախնդիրների ոտը կտրելու համար, որոնք հիմայ ձիուց վախենալով չեն կարող գնալ այնտեղ երկիրը տեսնելու ու ճանաչելու համար....

Գրիգոր Նիկողոսեան

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 37½ կ., երկրորդ 94 ր. 62 կ., երրորդ 94 ր. 50½ կ., չորրորդ 94 ր. 75½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 25 կ., երկրորդ 218 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 87½ կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 92 ր. 87 կ., ոսկի 8 ր. 8 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,47 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 209 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 258 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ դներով կը ծախվին. **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի: Անգլիական ըէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, ջենսենի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, տուրնօրի **ԳՐԻԶՆԵՐԸ** և էկստրակտ կակաշօկօլադի ծախելու համար, որոնք վարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան: **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.: Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հագուստ 15 ր., կոնֆեկտներ հագի դէմ 60 կ. ֆունտը:

86—100

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ-ՎՐԱ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՏԷՐ ԵԱ. Ս. ԿՈՒՇՆԱՐԵՕՎ յայտնում է հետևեալը. իմ ծխախոտի արդիւնաբերութեան մեծ պահանջը դրդեց Թիֆլիսի գործարանատէր Պիրալով և ընկ. և Գալեգօվին նմանվել իմ արդիւնաբերութեան ձևին զանազան անուններով, մանաւանդ „ԼՕՐԻՍ-ՄԵԼԻԿՕՎ“, „գեներալ ԳԷՅՄԱՆ“ և „գեներալ ՍԿՕԲՕԼԵՎ“: Նախազգուշացնելով իմ ծխախոտը գործածողներին, խնդրում եմ ուշադրութիւն դարձնել իմ ֆիրմայի հետևեալ նշանների վրա. 1) Հրապարակական հաւանութիւն 1865 թուականի Մոսկվայի հանդէսից, 2) Ոսկեայ մեդալ Մոսկվայի տեխնիկական հանդէսից 1872 թ., 3) Պատուաւոր կարծիք 1873 թ. Վիէննայի աշխարհանդէսից, 4) մեծ մեդալ 1876 թ. Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհանդէսից, 5) Արծաթէ մեծ մեդալ 1878 թ. Փարիզի աշխարհանդիսից, իսկ այդ նշանները չունեցող արդիւնաբերութիւնը խնդրեմ կեղծ համարել: Մակեդոնիացից նուրերում ստացայ ամենալաւ ՀՈՏԱԻԵՏ ԾԽԱԽՈՏ: Լաւ յատկութեան ծխախոտ սիրողներին խնդրեմ դիմել Թիֆլիսի մէջ. Սպիրիդօն Իվանովիչ Պօպովին, Բամազովին, Բայանդուրովին, Միկիրտումովին, Բէժանովին, Տէր-Գրիգորեանց և ընկ. և դէպօն, որ գտնվում է Գօլովինսկի փողոցի վրա, Իշխան Բագրատիօն-Մուխրանսկու տանը: ԱՅԴ ԱՆԶԻՆՔ ՈՒՂՂԱԿԻ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ԾԽԱԽՈՏԸ:

Րօստովի 1-ն գիլդիայի վաճառական և ծխախոտի գործարանատէր ԵԱԿՕՎ ՍԵՄԵՈՆՕՎԻՉ ԿՈՒՇՆԱՐԷՕՎ:

1—12

## „ԽԵՆԹԸ“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՖՖԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրոնական գրավաճառանոցում“, „Կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազինների մէջ:

Գինն է 1 ռուբլ 20 կոպ.:

Въ Редакціи газеты «МШАКЪ» Продается „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“ Д. Григорія АРЦРУНИ. Брошюра напечатана въ Москвѣ. Цѣна 25 коп.

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների:

Արդէն վաճառվում է

ԻՆՉ ԲԱՆ Է

## ԺԱՆՏԱԽՕՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժողովրդական և հասարակաց մատչելի խրատ բժիշկ Պ. Ա. Իլինսկոյ:

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց

Գինն է 15 կոպ. 100-ներով գնողներին զիջում կը լինի: Մեր հասցէն՝ Въ Эривань А. Гуламирянцу

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ—ՀԷՔԻԱԹՆԵՐ. ԺՈՂ. ԵՐԳԵՐ. ԲԱՌԵՐ. ԱՌԱԾՆԵՐ. ԱՆԷԹՔՆԵՐ. ԵՐԳՈՒՄՆԵՐ. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, և այլն, ուղարկող պարոններին խնդրում եմ այսուհետև ինձ հետևեալ հասցէով դիմել.

Вагаршапатъ. *Тиграну Навасартяну*.

Տ. Նաւասարդեանց.

2—6

Ժողովել եմ, ժողովում եմ և շուտով 'ի լոյս պէտք է ածեմ հայկական ձայնագրութեամբ „Ծաղկաքաղ ձայնագրեալ երգարան.“ ուստի խնդրում եմ ձայնագրագէտներին և այն՝ պարոններին, որոց մօտ գտանվում են ազգային երգեր թէ հայկական և թէ եւրոպական ձայնագրութեամբ (նօտաներով) բարեհաճել մինչև յառաջիկայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ: Երգեր ուղարկողների ազգանունները կը տպագրուին երգարանի վերջը և մի-մի օրինակ էլ ձրիապէս կը ստանան: Վարձատրութիւն պահանջողները ևս կարող են իրանց պայմանները յայտնել: Իմ հասցէն: Տփխիս, Եկնիկ քահանայի Երզնկեանց:

7—10

**ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ** (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

14—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՖՖԻԻ „ԽԵՆԹԸ“** անուանով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահտեսի-Յակոբեանցի տպարանը: ԲԱԴՈՒ՝ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷԶ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.: **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ:

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաչափի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն:

75—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համեմատեցէք թէյի ֆունտը | | | 1 ր. 5 կ. | Մոսկվայից բերվող թէյի հետ | | | | ֆ. 1 ր. 30 կ. |
| — | — | — | 1 ր. 10 կ. | — | — | — | — | ֆ. 1 ր. 40 կ. |
| — | — | — | 1 ր. 20 կ. | — | — | — | — | ֆ. 1 ր. 60 կ. |
| — | — | — | 1 ր. 40 կ. | — | — | — | — | ֆ. 1 ր. 80 կ. |
| — | — | — | 1 ր. 60 կ. | — | — | — | — | ֆ. 2 ր. — |
| — | — | — | 1 ր. 80 կ. | — | — | — | — | ֆ. 2 ր. 50 կ. |
| Ամենալաւը | — | — | 2 ր. — | — | — | — | — | ֆ. 3 ր. |

87—100

Թիֆլիսի Հայոց Ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննութիւնները

Մայիսի 22 և 23-ին Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
„ 25-ից—30-ը Հաւլաբարի Մարիամեան օր. ուսումն.
„ 28 և 29-ին Կուկիու Թանդոյեան օր. ուսումն.
„ 30-ին „ Հաւլաբարի Ս. Մինաս եկ. ուսումն.
Յունիսի 1 և 2-ին Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն
„ 3 և 4-ին Ջղրաշէն եկ. ուսումնարաններում.
„ 5-ին „ Շամքոռեցոց եկ. ուսումնարանում.
„ 6-ին „ Զօրաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.
„ 8-ին „ Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
„ 9-ին „ Զուղուրէթի Ս. Աստուած. եկ. ուսումնարաններում.

Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

## ԱՄԱՐԱՆՈՅՆԵՐ

Տփխիսից,—մօտ 8 վերստ հեռաւորութեամբ,—ՋԱՔԱՐԱՇԵՆՈՒՄ, փոքր Լիլոյի մօտ,—վրաց խութեբայի կէս ճանապարհի վերայ տրվում են վարձով ԵՐԿՈՒ ԱՄԱՐԱՆՈՅՆԵՐ, իւրաքանչիւրը՝ երեք սենեակից բաղկացած իւրեանց առանձին խոհանոցներով: Գնի մասին կարելի է հարցնել տիրոջը—Զաք. Գրիգորեանցին—նորա դրախանութումը:

5—10

**ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** մուրաբաներ, կօնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻԶՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, ալբոմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեօնկա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խերես, կօնեակ և այլն: ԹԷՅ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մանգնեգիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէմ, ԽԻՆԱՅԻ գինի ջերմի դէմ, կարբոլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկրօղների համար, պարսկական փոշի: 10—100

„ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՕՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գլխաւոր գրասենեակի մէջ, Երևանակայա հրապարակի վրա, Զակելու տանը բացված է առորագրութիւն յօգուտ 'ի Տէր Հանդուցեալ կայսր Ալէքսանդր II-ի **ՈՐԲԱՆՈՅԻ**, որ բացվելու է Թիֆլիսի մէջ:

15—15

**ՄԵԺԵՎՕԻ ԻՆԺԵՆԵՐ ՍԷՐԳԷՅ ԻՎԱՆՕՎԻՉ ԲԱԳԱՏՈՒՐՕՎ** ընդունում է. կազմել ՑԱՏԱԿԱԳԾԵՐ (պլաններ), գծագիրներ, պրոֆիլներ, կատարում է կալուածների, հողերի և անտառների բաժանումն գնահատողական գիտական հիմունքների վրա, կատարում է ընդօրինակումներ (съемки) և հարթաչափութիւններ (нивеллировка) ԲԱԺԱՆՈՒՄ Է ԱՆՏԱՌՆԵՐԸ կանոնաւորապէս գործածելու համար, գնահատում է հողերը, ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ է տալիս երկրաչափական և կալուածական գործերի վերաբերութեամբ և մի և նոյն ժամանակ կալուածական գործերի մէջ մասնագէտ լինելով իրաւաբանական, տեխնիկական և տնտեսական կողմերից, պատրաստ է որ և է հիմնարկութեան հաւատարմատար լինել կալուածական և երկրաչափական գործերի համար: ՀԱՍՑԷՆ և ՊԱՏՄԱՆՆԵՐԸ թողնել „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը:

7—10

Дозволено цензурою, Тифлисъ. 5 Іюня 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.